Դրա ռադիոհաղորդումների եւ մասամբ էլ հեռուստահաղորդումների ծրագրերը իրենց հավատչության ու

բազմազանության շնորհիվ շարունակում են մեծ հեղինակություն վայելել աշխարհի տարբեր երկրներում:

Սակայն BBC-ի գլխավոր տնօրեն Ջոն Բիրթ օրերս հայտարարեց, որ ընկերության միջազգային ծառայությունում շուտով տեղի են ունենալու «լայն բարեփոխումներ»: Դրանց հետեւանքով հարցականի տակ կհայտնվի BBC-ի եթերի բնույթը: մասնավորապես միջազգային հաղորդումների խմբագրությունը կարող է կորցնել իր ղարտեղակությունը եւ կազմակերպական անկախությունը:

Անգլիայի խոշորագույն ռադիոընկերության ճակատագիրը հոգում է շատերին եւ մասնավորապես ֆրանսիացիներին, այս առնչությամբ գրում է «Էքսպրես» հանդեսը: Դա կապված է դատմական որոշակի իրադարձությունների վերհուշի հետ: Երբոր աշխարհամարտի տարիներին BBC-ի ալիքներով էր, որ գեներալ Շարլ դը Գոլը նացիստ զավթիչների դեմ դայքարի եթերում կոչ արեց:

BBC-ի միջազգային հաղորդումները 42 լեզվով մոտավորապես բազմապիսի երկրներում մշտապես ունկնդրող 140 միլիոն ռադիոլսողներ ունի: Ի դեմ. ունկնդիրների թվով BBC-ն կրկնակի զիջում է իր մեծամասնագույն մրցակից «Ազատ Եվրոպա»-ին: Սառնարանի եւ մթոն «բեմ» կենտրոնների բնակիչների համար BBC-ին մնում է տեղեկատվության նոյն վստահելի եւ անկողմնակալ աղբյուրը եղել եւ երկրող աշխարհամարտի տարիներին: Միջազգային հաղորդումներ հեռարձակող ռադիոընկերությունների մեջ BBC-ն նաեւ ամենադարդն է ու լսախնդրանքը:

Անգլիական ռադիոընկերության միջազգային հաղորդումների խմբագրության անկախությունը մինչեւ օրս ապահովված է եղել այն բանի շնորհիվ, որ միջազգային ծառայությունը մասամբ ֆինանսավորվել է երկրի արտգործնախարարության, այսինքն կառավարության կողմից: BBC-ի առաջիկա կազմակերպական փոփոխությունների արդյունքում Ռադիոյի կառավարությունն ար դեն իսկ լրջորեն մտահոգություն են հայտնել միջազգային հանձնաժողովների հանձնակատարներ Դոնալդ Դոնալդսոնը եւ Միխայել Գորբաչովը:

Պ. Ջ.

Պարզվում է, որ Տաշքենդը ընդհանրապես չունի իր խորհրդանիշը: Սամարղանդի դարագան բոլորովին այլ է: Նա ունի իր Ռեգիստանը, իսկ մեդդանների ամեն մինարեթի՝ հարեւանությամբ, ասդղազարդ երկնում կարելի է տեսնել մեկական մահիկ: Լուսին Տաշքենդում չես գտնի: «Բարեկամության եւ արեւի» երբեմնի մայրաղաքի մասին հեքիաթը, իրոք միթե է, խորհրդային քարոզչության արդյունք միրաժ: Նույն մեքենայի թեթեւ շարժիչի հզորությամբ Տաշքենդի

ԳՈՐԾՈՒՂՈՒՄ

Տաշքենդը խորհրդույզով

շուրջ հյուսվել են եւ ուրիշ առասդելներ, ինչդիսին է, օրինակ, «Տաշքենդի շոգը»: Աշգաբադի արեւն անհամեմատ ավելի կիզիչ է, իսկ երեւանը ավելի հարավային դիրք ունի:

Տաշքենդը օազիս է, վերջինիս հատուկ բոլոր գլխավոր հատկություններով: Գոյատեւում է ներկայով: Ոչ անցյալ, ոչ ապագա: Ճիշտ է, օազիսը ավելի մեծ է գրեթե օրինակներից, սակայն չունի ավանդական արտաքինի: Փոխարենը երկու-երեք տեսակի ծառ (գերազանցապես գաճաճ բքենի եւ կաղնի), եւ այն էլ ոչ թե կիսացամաք վայրերում, այլ Շարաֆ Ռաշիդովի եւ Դինմուհամադ Կունաեւի անունները կրող կենտրոնական փողոցներում: Ընդ որում, նույն Ռաշիդովի բրոնզե կիսանդրին, նախագահական դալատի ծիշտ դիմացի դտուրակում, ոչ մի դեղերում ստվերներ չէ: Նա կա, ապրում է, քանզի բացակայում է Անցյալը: Ժամանակը կարծես կանգ առած է, եւ արեւմտյան շարժիչոցների հագեցվածությունը ի զորու չէ հոդարկել անփոփոխ մնացած մենալիտետ կոչվածը:

Արեւելքն իր ծեւի մեջ Տաշքենդում բացակայում է: Այն զգալու համար անհրաժեշտ է ուղեւորվել հյուսիս կամ հարավ: Այնտեղ միայն հնարավոր է նշմարել համատարասխան աստիճանակարգ անատոմ, ուղղ. լարոտիս, մզկիթ, տուկա, մահիկ, տարազ եւ այլն: Սինչդեռ Տաշքենդում անկա է հարցի բովանդակությունը: Նախ հաղաքաքիական կյանքի գործակիցը համարժեք է ամենակատարյալ էլիտակերդ զոդի: «Մեծ» հասկացությունն այնտեղ ոչ այնքան տարածային է, որքան դիրքային, եւ հետեւաբար «հարգանքը մեծի նկատմամբ» արտահայտվում է յուրովի: Սայրաքաղային բնակչությունը աշխարհից դժգոհ չէ, եւ ընդհանրապես կասկածելի է թվում, թե այնտեղ գործնական մակարդակներում գոյություն չի կարելի անվանել, քանի որ հենակետերն են տարբեր: Այն, ինչ մենք կոչում ենք բնատիրություն, այնտեղ ժողովրդավարություն է, եւ այն, ինչ մենք կոչում ենք ժողովրդավարություն, արեւմտյան չափանիշներով բնատիրություն է:

Ի՞նչ գույնի է Տաշքենդը... հավանաբար կանաչ: Ընդ որում ոչ թե երկրաբանական, այլ բուսական: Տաշքենդի ղղիկնը մալախիտ չի դառնում բրվածին չկա: Ֆլորֆիլի հատիկներն են ներկում հաղաքը:

Գոյություն ունի յուրաքանչյուր Տաշքենդ: Առաջինը եւ ըստ երեւույթին վերջինը ներկայացրածս բասն է:

Երկրորդը դեղի անաղաս տանող տրամվայների երկաթգիծն է: Անվանումից զատ, հաղաքային բնակավայրի ոչ մի նշույլ: Տրամվայը փորձում է ներկայանալ ուղղի կարգավիճակով: Երրորդը մոռացել եմ: Ընդհանրապես Տաշքենդի օդը նոյասավոր է շատ բան շատ շուտ մոռանալու համար:

Տաշքենդը Ուզբեկստանի անձնագիրը չէ: Գուցե ծննդյան վկայականը, բայց ոչ ավելի: Քաղաքից դուրս աշխարհն այլ է: Երկիրը կլոր ու դեղին, ուրիշ նոյասակներ, ուրիշ մարդիկ, ուրիշ սնունդ:

Սայրաքաղաքում լավ են սնում: Թույլ ապահովված խավը սնվում է այնդես, ինչդես մենք 10-20 տարի առաջ: Նվազագույն բուսակը շուրջ 40 ԱՄՆ դոլար է: Խանութները բաց չեն, սակայն օգտվում են շատերը: Քաղաքային տրանսդորտը աշխատում է լավ: Սակարդային կյանք, կարծես, չկա: Մի խոսքով եթե ապրում ես սնվելու համար, Տաշքենդը վատ տեղ չէ: Եթե սնվում ես ապրելու նոյասակով, իմ կարծիքով, դժվար կլինի: Թեեւ ամեն ինչ այսքան դարզունակ չէ, առավել եւս մեր դայմանների անդունդից:

ԱՐԻՍ ԴԱՎԹՅԱՆ

Տաշքենդ-Երեւան

ԹՈՒՐՔԻԱ

Մարդու իրավունքներ ոտնահարվում են մշտապես

8 ՕԳՈՍՏՈՍ. BBC-ՄԱԿ-ի մարդու իրավունքների հարցերով ենթահանձնաժողովը, որի կենտրոնական գրասենյակը գտնվում է Ժնեւում, ունկնդրեց ոչ կառավարական կազմակերպությունների զեկուցումները Թուրքիայում տեղի ունեցող մարդու իրավունքների խախտումների մասին: Խնդրես հայտնեց «Իրավաբանների միջազգային հանձնաժողովը», մարդու իրավունքների խախտումներ Թուրքիայում տեղի են ունենում մշտապես, հատկապես քուրդ անգամների դեմ տարվող կառավարական գործունեության շրջանակներում: «Մարդու իրավունքների միջազգային Ֆեդերացիայի» բարական բաժանմունքը մատնանշեց, որ անցյալ տարի հազարից ավելի հաղորդագրություն է ստացվել թուրական բանտերում բանտարկյալների հանդեպ կիրառվող կտանջումների մասին: «Թմիրկները մարդու իրավունքների դաշտդանման համար» ամերիկյան իրավադաշտդան կազմակերդությունը դեռ նախորդ երեքշաբթի օրը հայտարարեց, որ բարական բժիշկները մշտապես տեսնում են, որ դեղերի նրանք բանտերում կիրառվող կտանջումների փաստերը: Ավելի վաղ, բարական իշխանությունները մշտապես հերքել են այն փաստը, թե կտանջումներ իրենց թույլատրությամբ են կիրառվում: Անկարան այս վերջին բացահայտումներին դեռ ոչ մի կերդ չի արձագանքել:

150 միլիարդ դոլար բանակի արդիականացմանը առաջիկա տարիներին

«Լարշաղեն Նեջմեթդին Էրբաքանը եւ վոխվարչաղետ Թանսու Չիլլերն այցելեցին ազգային դաշտդանության նախարարություն, որ դաշտդանական արդյունաբերության վերաբերյալ մանրամասն տեղեկություններ տվեց նախարար Թուրհան Թայանը: Սիա մի հատված նրա խոսքից. «Լարշավյան ոլսի եւ ԽՄՀՄ փլուզումից հետո Թուրքիայի եւ բնդհանուր առմամբ աշխարհում անվտանգության, կայունության հաստատման ու խաղաղության ապահովման վերաբերյալ Թուրքիայի փայփայած հույսերը կարճատեւ կյանք ունեցան: Ռազմական վտանգի մեծացման դրսեւորվելի հաղորդագրություն է ստացվել թուրական բանտերում բանտարկյալների հանդեպ կիրառվող կտանջումների մասին: «Թմիրկները մարդու իրավունքների դաշտդանման համար» ամերիկյան իրավադաշտդան կազմակերդությունը դեռ նախորդ երեքշաբթի օրը հայտարարեց, որ բարական բժիշկները մշտապես տեսնում են, որ դեղերի նրանք բանտերում կիրառվող կտանջումների փաստերը: Ավելի վաղ, բարական իշխանությունները մշտապես հերքել են այն փաստը, թե կտանջումներ իրենց թույլատրությամբ են կիրառվում: Անկարան այս վերջին բացահայտումներին դեռ ոչ մի կերդ չի արձագանքել:

«Թուրքիայի տնտեսական առաջատար փորձը օգտակար Չինաստանի համար»

Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) նախագահ Մուստաֆա Քալեմլիի գլխավորած բուրք խորհրդարանականների դատվիրակության այցը Չինաստանում շարունակվում է:

Պատվիրակությունն այցելեց Չինաստանի ազգային խորհուրդ: Հանդիպումների ընթացքում նա ներկայացնելու չին-բարական խորհրդարանական կապերի զարգացման, սեդտեմբեր ամսին Պեկինում կայանալիք աշխարհի երկրների խորհրդարանների ներկայացուցիչների 96-րդ հանդիպման աշխատանքների, Հարիրաբ-2-ի արդյունքների եւ 2 երկրների միջեւ առեւտրատնտեսական հարաբերության զարգացման առնչվող խնդիրներ: Հանդիպման ընթացքում Քալեմլին տվյալներով նշեց, որ 2 երկրների միջեւ առեւտրի գծով դրական դրակից զուտ է ավելացնելով «Թուրքիան իր տնտեսական բնագավառում ձեռք բերած առաջատար փորձով Չինաստանի տնտեսական զարգացմանը կարող է օգտակար լինել»:

Օգոստոսի 8-ին Քալեմլին հանդիպում ունեցավ ՉԺՀ-ի վարչապետ Լի Պենի հետ:

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԲԱԶՅԱՆ

Սաուդյան Արաբիա. Ամերիկացիներից հետո ֆրանսիացիներն ու բրիտանացիները կարող են լինել մյուս թիրախները

Մի սաուդացի այլախոհ նախազգուշացրել է, որ Սաուդյան Արաբիայում ամերիկյան զինվորների դեմ ուղղված ահաբեկիչների գործողությունները կարող են տարածվել նաեւ ֆրանսիական եւ բրիտանական զինվորական ածնակազմերի վրա եւ շեշտել է, թե Ռիադում եւ նրա մոտակայքում 26 կյանք խլած դայթեցումն իրականացնողները «խորամիտ գիտակցում են, թե ինչ բիրախ են ընտրում»:

«Ինդիփենդենթին» տված հարցազրույցում հարուստ առեւտրականների հայտնի ընտանիքի ժառանգ Օսամա Լադենը, որին Ֆահդ բազավորը զրկել է հաղաքացիությունից, Սաուդյան Արաբիան նկարագրել է որպես մի «ամերիկյան գաղութ», որն իր դրամը վատնում է ամերիկյան անօգուտ զենքի եւ վարկով ապրանքներ ձեռք բերելու վրա: ԱՄՆ-ին մեղադրելով սաուդյան տնտեսության վատթարացումը հրահրելու մեջ, նա ավելացրել է նաեւ, որ Վաշինգտոնը դարձել է արաբների եւ իսլամական երկրների բնաջնջին եւ «դիմակայում է յուրահանչյուր մուսուլմանի»:

Պրն Լադենն ասել է, որ «ահաբեկիչները հարվածել են իրենց գլխավոր բնաջնջներին, որոնք ամերիկացիներն են: Նրանք չեն սպանել ուրիշներ, ոչ էլ Սաուդյան Արաբիայի զինված ուժերում կամ ոստիկանության մեջ ծառայող իրենց եղբայրներին»: Նա ենթադրել է, որ նախատիպ հարձակումները կկրկնվեն եւ կարող են ներգրավել նաեւ ուրիշ երկրների զորքերին: Նա Բրիտանիային եւ Ֆրանսիային խորհուրդ է տալիս իրենց զորքերը հանել Սաուդյան Արաբիայից:

Պրն Լադենն ասել է, որ հունիսի 25-ի հարձակումը, որը դատճառ դարձավ 19 ամերիկացիների մահվան եւ ավելի քան 300 անձանց, հետագայում սաուդացիների եւ բանգլադեշցիների վիրավորվելուն, «մուսուլմանների հանդեպ ամերիկացիների վերաբերմունքի, Պաղեստինում հրեաներին աջակցելու եւ Լիբանանում սպանությունների սպանությունների հետեւանքն է»:

Հարձակման ուղղակի դատասխանատվությունն իր վրա յուրացնելով, որն Լադենն անվանեցել է դատերազմական հանգամանքների եւ դրդապատճառների իր լավատեղյակության մասին: Նա նորից կրկնել է դատվարդների Սաուդյան բանակային բազաների տարածման եւ այն խնամ իսլամական կրոնական կառուցությունը փոխարինելու դահանջները:

Սաուդյան դատասխանները դայթակղի հետեւանքների ոչ մի տարբերակ չեն հրադարակել: Նրանք ասել են, որ դեռ դատրաստ չեն որն Լադենի եւ հարձակման միջեւ եղած կապը բացահայտելու, բայց ավելացրել են, որ այն «չի կարող անհասկանալի», որովհետեւ վերջինս երկար ժամանակ բնակվել է ստանալ Աֆղանստանում ռազմական դատրաստություն անցած իսլամական դատերազմիկների հետ:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱԱ Խմբագիր

ԱԶԳ

Մշակույթ

«Իրանի բաց դարպասից առաջինը եկան մեր արյունակիցները»

ԳՄ-ն հատուկ ուշադրություն է հատկացնելու գրական կադրերին, կա միջազգային բաժին, որը զբաղվում է դրանով: Բնականաբար առաջին հերթին մտածում ենք Ռուսաստանի և Իրանի հետ այդ կադրերն աշխուժացնել, առաց ԳՄ խորհրդար Աբգար Ափինյանը երեկ, թեհրանահայ մտավորականների հետ հանդիպման առիթով: «Այն կողմից մեկնվող ձեռին եղբայրական ձեռ մեկնեցինք, խաղաղագետների գործը հնարացնել ազնցինք, իր սենյակում ողջունելով հավաքված թեհրանահայ հյուրերին, ՀԳՄ անդամ գրողներին, լրագրողներին, ասաց նախագահ Հրանտ Մաթևոսյանը: Սահմաններ բաց էին ուրիշների խաղաղագետների, առևտրականների առջև, իսկ բաց դարպասից, դարձվեց առաջինը եկան մեր արյունակից եղբայրները»:

Նրանցից ճանաչում էինք միայն մեկին Էդիկ Բաղդասարյանին, որի խմբագրած «Արազա» թերթի մասին տեղեկացրել էինք «Ազգի» էջերում: Թեհրանահայերին ներկայացրեց ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ասպիրանտ Անդրանիկ Սիմոնյանը, որը կրթությունն ստանալուց հետո վերադարձել է Թեհրան: Էդիկ Մնացականյանին ներկայացրին նրա 12 ամյա ուսումնասիրության մասին խոսելով Աճառյանի «Արմատական բառարանից» խաղել է դասակարգերն փոխառությունները և նույնանուն լեզվով մատուցել, Էդիկ Բաղդասարյանը (Գերմանիկ) ոչ միայն ծրագրավորման դասընթացներ է տալիս, այլև 50 գրքի բարգմանիչ է, հայոց դպրության հսկա նյութը մատուցում է դասակարգերով, Հրաչ Ստեփանյանը միջազգային խորհրդի խնդիրներով զբաղվող խորհրդան է, ներկայացել է «Պանթուրանիզմը տարածաշրջանում» հոդվածաշարը, Սիմոն Խաչատրյանին հուզում են Հայ դպրի հարցերը, Ռոբերտ Ավագյանը, որ տիրապետում է 4-5 լեզուների, հանճարեղ երեսացող անուն է իրանահայ մամուլի էջերում:

Հարցերը շատ էին ու ոչ միայն գրական աշխարհին վերաբերող, դասախոսությունները բնականաբար երկար, որ սղաղիչ լինեն: Այդ ամբողջից գտնենք կարևորը. Թեհրանում առաջին հայերեն թերթը «Շավիղն» է տպագրված 1896-ին: Տարբեր տարիների տպագրվել է 84 անուն մամուլ, որոնցից Խավրիզում, Թեհրանում բնականաբար բավարար չեն կարող լինել, եւ հայերենի գրագետ մակարդակ առաջարկել:

Ազատ Եղիազարյանի ԱՄՆ արտագաղթածների մասին հարցին տրված դասախոսից դարձ դարձավ, որ հայերի թիվն Իրանում դակասում է (300-350 հազարից այսօր հասնվում է 70-90 հազար): Հայկական մի դրոց վերջերս ծախեցին: 1947-ին սկսված արտահոսքի ճանփան ԱՄՆ, երբ սկզբում զգուշավորությամբ էր բնտրվում (անգլերեն չգիտենք ո՞ւր գնանք), այս նույնը այսօր չի նկատվում: Հայկականության դասակ է նկատվում նաև անուններում. առաջ բարեական, դարակական, այսօր եվրոդական անուններով են կոչվում հայ նորածիններ: Մեր առաջ գործի լավագույն վկայությունը կլինի այն, որ ԱՄՆ-ի փոխարեն Հայաստան գան, նկատեցին թեհրանահայերը:

Պատասխանելով գաղթի գրական կյանքի մասին տրված մեր հարցին, Էդիկ Բաղդասարյանը տեղեկացրեց, որ թեհրանահայ գրական շրջանակը հիմնադրվել է 1985-ին Գալուստ Խանենցի գլխավորությամբ: Ամիսը 2 անգամ կլուրակի երեկոները հավաքվում են, խոսում ընդհանուր հասարակական-խաղաղական հարցերի շուրջ: Զգոն գրականության դայմաններում խաղաղական հոդվածներ ու վերլուծություններ գրվում են, բայց հակադրական արեւ տող բնականաբար չես գտնի: Խոսում են նաև գրական աշխարհին հոգող խնդիրների մասին, կարդում իրենց ստեղծագործությունները: Պրն Բաղդասարյանը ափսոսանքով նշեց, որ հայասանավարների մեծ մասը հիմնականում չի մասնակցում այդ հավաքներին:

Վերջում բոլոր ներկաները մտերիմ փոխանակությունը շարունակեցին ճաշի սեղանի շուրջ ԳՄ-ի «Նավզիկի» կաբարեում:

ԱՆ. Հ.

ՊՊՐՈՒԹՅՈՒՆ

Աղաբաբյան վարժարանը հայկական համայնքին

ԱՍՏՐԱԽԱՆ, 9 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Քաղաքի հայտնի Աղաբաբյան վարժարանի շենքը խաղաղային իշխանությունները վերադարձրին հայկական համայնքին, եւ, ըստ ծրագրի, այն դառնալու է դասմամշակութային կենտրոն «Արեւ» անունով, այս մասին Արմենպրեսի թղթակցին տեղյակ դահեց Երեւանի դեսական համալսարանի լաբորատորիայի վարիչ Հայկազ Զաքարյանը, որը երկար տարիներ ուսումնասիրել է վարժարանի դասմությունը եվ դրա վերաբերյալ բեկնածուական թեզ դաբստդանել:

Ախալքալակից այստեղ բնակություն հաստատած դոկտորներ, բժշկական ինստիտուտի դասախոսներ Զուռնաչյան եղբայրները, որոնք ղեկավարում են տեղի հայ համայնքը, մտադիր են վերականգնել անցյալի մոռացված շատ արժեքներ դրոցը, եկեղեցին, հրատարակչական գործը եւ այլն:

Աղաբաբյան վարժարանը ռուսահայ կրթական օջախների բվում առաջին աշխարհիկ դրոցն է, հիմնադրվել է 1809 թվականին, Սդահան քաղաքից մեծահարուստ Նիկողայոս Աղաբաբյանի միջոցներով ու ջանքերով, գոյատեւել է 109 տարի: Այստեղ են սովորել հայ մշակույթի եւ գիտության երախտավորներ Հարություն Ալամդարյանը, Գաբրիել եւ Պետրոս Պատկանյանները, Հովակիմ Սոլովյանը, Էմին Տեր-Գրիգորյանը եւ ուրիշներ:

ՏԱՍՏԱՌՆ

Թբիլիսիի Ռուսթավելի թատրոնը Երեւանում՝ 2 ներկայացումով

Օգոստոսի 29-ին եւ 30-ին Թբիլիսիի Ռուբեն Սուրուպի գլխավորած Ռուսթավելի թատրոնը Պարոնյան երաժշտական կոմեդիայի բեմում կներկայացնի Շեքսպիրի «Մակբեթը»: Մեկ օր ընդմիջումից հետո՝ օգոստոսի 31-ին եւ սեպտեմբերի 1-ին թատրոնը նույն բեմում հանդես կգա Բրեխտի «Կովկասյան կավճե շրջան» ներկայացումով: Իսկ թատերական գործիչների միությունը օգոստոսի 30-ին ժամը 12-ին, հանդիպում է կազմակերպել ճանաչված բեմադրիչի հետ: Ռուսթավելի թատրոնի հյուրախաղերն Երեւանում կազմակերպվելիք վրաց մշակույթի օրերի շրջանակներում են, որն հիշեցնենք անցկացվելու է օգոստոսի 29-ից սեպտեմբերի 2-ը:

4 տարի խոստացված «Ռոմեո եւ Ջուլիետը» սեպտեմբերին

Սեպտեմբերի վերջին Հրաչյա Ղափլանյան դրամատիկական թատրոնը կներկայացնի Շեքսպիրի «Ռոմեո եւ Ջուլիետ» երկար սպասված ներկայացումը: Բեմադրիչ Արմեն Խանդիկյանի այս գործը Դրամատիկի դասին փակցված շեքսպիրյան ներկայացումների շարքում հայտնվել էր դեռեւս 4 տարի առաջ, բայց... գուցե ձմեռներ, ֆինանսների անբավարարություն: Հետաքրքիր բեմադրությունը շարք կկազմի մայրաքաղաքի տարբեր թատրոնների խաղացանկի շեքսպիրյան ներկայացումներին («Օրելո», «Լիր արքա», «Փոքրիկ», շուտով՝ «Ռիչարդ Երկրորդ»): Գլխավոր դերերում հանդես կգան Հրաչյա Հարությունյանը եւ Լիլիթ Մնացականը: Հնչյունային ռեժիսորը Աշոտ Փափազյանն է, իսկ նկարիչը՝ Կարեն Գրիգորյանը:

Մուտ կլինի՞ Ավինյոնի փառատոնային բեմ

Հոկտեմբերի 20-ին Երեւան կժամանի Ավինյոնի փառատոնի տնօրենը՝ դիտելու Սունդուկյան թատրոնում բեմադրվող Շեքսպիրի «Ռիչարդ Երկրորդը»: Թատրոնի տնօրեն Վահե Շահվերդյանի տեղեկացմամբ, ամենայնայնիվ՝ հուլիսի 15-ից օգոստոսի 10-ը տեւող միջազգային 50-ամյա այս փառատոնին հայկական որեւէ թատերախումբ մասնակցություն չի ունեցել: «Ռիչարդ Երկրորդը» հավանության արժանանալու դեպքում հնարավոր է տեղ գտնի 97-ի փառատոնային ծրագրում:

Երեքաբթի...

Օգոստոսի 13-ին, ժամը 15-ին, Գյումրիի Կենցաղի բանգարանում (Շիրազյանների տուն) կբացվի նկարիչ Վազգեն Թադեւոսյանի (Վազո) Metapolis 58 խորագրով ցուցահանդեսը: Այն արդյունք է հեղինակի շուրջ մեկ տարի տեւող Ակցիայի. ցուցադրվելու են մեծաղյա օբյեկտներ, ինստալյացիաներ, լուսանկարներ, ինչպես նաեւ Ակցիայի ընթացքում նկարահանված տեսաֆիլմեր: Ցուցադրությունը կտեւի մինչեւ սեպտեմբերի 11-ը:

ՕՐՎԱՅՆ

Վերականգնվել է Ազգային պատկերասրահի հիմնական ցուցադրության մի մասը

ԵՐԵՎԱՆ, 9 ՕԳՈՍՏՈՍ, ՓԱՍՏ: Շուրջ երկու տարի է, ինչ չէր գործում Հայաստանի Ազգային դատկերասրահի մշտական ցուցադրության մի մասը, որը ներկայացնում էր խորհրդային շրջանի հայ գեղանկարչության տարբեր ուղղություններն ու սերունդները: Այս ցուցադրությունը, որ զբաղեցնում էր Ազգային դատկերասրահի դրդիները, տեսական դադարից հետո նոր մշակված նախագծով նորից կսկսի գործել օգոստոսի 10-ից: Տեղեկացնելով վերականգնված ցուցադրության մասին, Ազգային դատկերասրահի փոխտնօրեն Հասմիկ Հարությունյանը միաժամանակ նշեց, որ առաջիկայում դատկերասրահը արվեստասերներին կներկայացնի հետաքրքիր ցուցահանդեսների մի շարք, որոնցից առաջինը կնվիրվի հայրենադարձության 50-ամյակին եւ կներկայացնի հայրենադարձ նկարիչների լավագույն ստեղծագործությունները: Դատկերասրահում կկազմակերպվեն նաեւ Բագրատ Գրիգորյանի եւ Հակոբ Անանիկյանի հետմահու անհատական ցուցահանդեսները:

Սդասվում է նախընտրական ճոխ համերգ

ԵՐԵՎԱՆ, 9 ՕԳՈՍՏՈՍ, ՓԱՍՏ: Մեր ստացած հավաստի տվյալներով, սեպտեմբերի 16-ին Երեւանի Հանրապետության հրապարակում անցկացվելու է ժամանակակից երաժշտության հայ աստղերի մեծ համերգ-փառատոն: Դրա խորագիրը մոտավորապես հետեւյալն է լինելու. «Լեւոն Տեր-Պետրոսյանը մեր նախագահն է»: Միաժամանակ նշենք, որ մյուս թեկնածուներն էլ չեն դատրաստվում հետ մնալ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն, նրանցից ոմանք ի դատասխան այդ ակցիայի իրենց կազմակերդած համերգներին կներգրավեն օդերային եւ հեղինակային երգի հայտնի կատարողներին:

Դրամների ցուցահանդես

ԵՐԵՎԱՆ, 9 ՕԳՈՍՏՈՍ, ՓԱՍՏ: Հայաստանի դատմության դետական բանգարանում սեպտեմբերի 10-ին կբացվի Հայաստանի դետական դրամներին նվիրված մի հետաքրքիր ցուցահանդես, որում կներկայացվեն ամենահին ծագում ունեցող հայկական դրամանիշները եւ այսօրվա դրամական միավորները: Ինչպես տեղեկացրեց բանգարանի տնօրեն Ալֆրեդ Շահնազարյանը, ցուցահանդեսը հնարավոր եղավ կազմակերպել միայն շնորհիվ լիբանանահայ գործարար Երվանդ Աղաջանի, որը հաճույքով բանգարանին տրամադրեց հայկական դրամների իր եզակի հավաքածուն: Հավաքածուում ընդգրկված են հայկական դրամների գրեթե բոլոր տեսակները սկսած Արտաշեսյանների եւ Ռուբինյանների ժամանակաշրջանի դրամներից:

ԵՐԵՎԱՆ

Էլիբեկյանների ընտանեկան արխիվը հանդարեց կենտրոնական արխիվի հավաքածուներ

ԵՐԵՎԱՆ, 9 ՕԳՈՍՏՈՍ, ՓԱՍՏ: Վերջերս ՀՀ արվեստի, դրականության եւ մամուլի վաստաթղթերի կենտրոնական դետական արխիվը նկարիչ Հենրի Էլիբեկյանից ստացավ Էլիբեկյանների ընտանեկան արխիվը, որը հանդիսանալու հարուստ նյութեր է դարունակում Էլիբեկյանների եւ Վաղարշակ Էլիբեկյանի մասին: Արխիվը դարունակում է 30-ական թվականներից մինչեւ 1986 թվականը տարբեր տարիների անձնական վաստաթղթեր, նամակներ, լուսանկարներ, դատվոգրեր, գրքեր, հոդվածներ, ազդագրեր եւ հրավիրատոմսեր: Վաստաթղթերի մի ստվար մասն է կազմում բիբլիահայ թատրոնին վերաբերող լուսանկարների հավաքածուն, որը ներկայացնում է Թբիլիսի հայ թատրոնի լավագույն ներկայացումների դերակատարները, այդ թատրոնի առավել ակնառու դերասաններին, տարբեր ներկայացումների նկարազարդումները: Արժեքավոր ձեռագրերի, վաստաթղթերի թվում են նաեւ Վաղարշակ Էլիբեկյանի 1975, 1976, 1977 թվականներին կազմակերպված անհատական ցուցահանդեսների տպավորությունների հուշագրերը, արտացոլում նկարչի ստեղծագործությունների մասին իրենց տպավորությունն են գրառել վրացի, ռուս, մերձբալթյան հանրապետությունների հայտնի մտավորականներ եւ արվեստագետներ:

ՍՓՅՈՒՌՔ

Յուրի Զորկաեֆ. «Հայ լինելս ընդունում եմ եւ հպարտ եմ դրանով»

Փարիզի «Աէխարհ» թերթի աէխաէակից Ժորժ Սարյանը հարցազրույց է ունեցել Յուրի Զորկաեֆի հետ: Այն բարգմանաբար ներկայացնում ենք մեր ընթերցողների ուշադրությանը:

– Գուշ Ֆրանսիայի ամենաժողովրդական ֆուտբոլիստներից մեկն եք եւ ամենից շատ փնտրվածը: Երբ չափում եք անցած ճանապարհը Դեսինի հայ մարմնամարզական միության ակումբից սկսած, ի՞նչ տպավորություններ եք ունենում:

– Շատ լավ տպավորություններ, քանի որ վերջին հաշվով եմ անցած բոլոր մեծ հաղթանակներ ինձ: Դուք հեռանալն են եղել կատարելագործվելու, աստիճանաբար բարձրանալու եւ անվանի ակումբների մեջ տեղ գտնելու իմ հարատեւ ցանկերի: Երբ առիթը ներկայացել է, աշխատել եմ հասնել այնտեղ, որտեղ գտնվում եմ այսօր:

– Ձեր հոր՝ Ժան Զորկաեֆի կերպարն անկասկած ներշնչել է Ձեզ: Կարելի՞ է ասել, թե ֆուտբոլիստի տալանտը ժառանգական է:

– Մոր անշուշտ: Հայրս շատ կարեւոր դեր խաղաց ինձ համար, հաստատեց այն ոգեղեն, երբ ցանկանում էի առաջին քայլերս անել եւ դառնալ դրոֆեսիոնալ: Սկզբնական շրջանում նա չէր խրախուսում ինձ, բայց հենց ցուցաբերեցի բնդունակություններս եւ անվերապահ ցանկությունս, նա առաջինն էր, որ ձեռք մեկնեց ինձ: Դրանից հետո մեր հարաբերությունները հոյակապ են:

– Անշուշտ հիշում եք Ձեր կյանքի դայմանավորվածությունս Իտալիա մեկնելուս համար չափազանց որոշ եմ:

– Դուք բնավ չեք բաժնվում Ձեր հայկական ծագումը: Ի՞նչ էիք զգում Ֆրանսիա–Հայաստան խաղից առաջ:

– Ինձ համար այդ մրցումը մեծ նշանակություն էր, իսկ Ֆրանսահայերի համար, ընդհանրապես, այն տալիս էր նախնիների: Գոհ եմ, որ մարդիկ գիտեն, որ ես հայ եմ: Հայությունս ընդունում եմ եւ հպարտ եմ դրանով:

– Մոտ ապագայում Հայաստան այցելելու ծրագիր ունե՞ք, սենյակ, որտեղ գտնվելիս:

– Այո: Նախատեսում եմ առաջիկա տարիներին այցելել Հրավերներ ունեմ, եւ ցանկանում եմ հանդիպել այն բոլոր մարդկանց հետ, որոնք մոտիկից հետեւում են իմ ելույթներին եւ բիկոնք կանգնում ինձ: Ուզում եմ ճանաչել հայրենիքս, տեսնել թե ինչպես է այնտեղ իրավիճակը: Գիտեմ, որ երկիրն ամբողջական վերակառուցման մեջ է: Եվ միշտ ոգեշնչվում եմ սեր ու կարեկցանքս Հայաստանի հանդեպ որպիսին մերթին հաստատ, ինչպես բոլոր հայերի այնպես էլ իմ մեջ հայրենի ինձ Հայոց դասությունը սովորեցնելով, դասագիրք են, որ մոտագույն մեծ դասանություն է: Երբեք չեմ մոռանա, որ հայ եմ: Ցավակցես դաստիարակելու եմ այնտեղ, ինչպես ես եմ դաստիարակված: Եվ հուսով եմ, որ նրանք էլ իրենց հերթին, նույն ձեւով կվերաբերվեն իրենց զավակներին:

Հ. Ե.

ԱՍՏՂԵՐԻ ՈՒՂԻՆ

Մայքլ Ջոնսոնը՝ հիանալի փեսացու

ԳԵՎՈՐԳ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ
Վաշինգտոն, Ֆրանսիա

Կան մարդիկներ, որոնք ծնվածներ են: Նրանք անվերջ կարող են խոսել իրենց մարզածեւի եւ անձնական կյանքի մասին: Որքան էլ տարօրինակ է, այդպիսի մարդկանց բիզնեսը շատ է: Քիչ բիզ են կազմում այն մեծանուն մարզիկները, որոնք ծգտում են անկախ մնալ: Նրանցից է Ատլանտայի օլիմպիական խաղերի հերոսներից մեկը, ամերիկացի առագավազորդ Մայքլ Ջոնսոնը, որը ոսկե մեդալի արժանացավ թե 200, թե 400 մետր վազքատարածություններում, բնդ որում, 200 մ մրցավազքում սահմանեցով նաեւ աշխարհի ռեկորդ 19.32 վրկ: Մայքլ Ջոնսոնի անունը հավանաբար ստանցվի «Պատմության ամենամեծ բիբեւայնտների» գրքում: Մայքլ Ջոնսոնն ավարտել է Տեխասի Բեյլորի համալսարանի բիզնեսի մասնաճյուղը: Ուսանողի տիպ, ոչ թե մրցումների, այլ հիմնականում Nike-ի, Coca Cola-ի, Bausch and Comb ֆիրմաների գովազդների, որ նա անում է: Բայց խոսքը եկամտերը Մայքլի «ցլոյնը չեն մեծացրել»: Նա բնակվում է մի համեստ տան մեջ, Վակո քաղաքում: Իսկ շաբաթվա վերջին նա հանգստանում է Դալլասի մոտակայքում գտնվող մի երկրորդական տան մեջ: Նրա ամենաթանկ գնումը համարվում է իր սպորտային ավտոմոբիլնան Acuara NCX-ը, որն արժե 80 հազար դոլար: Ջոնսոնը երբեք գրաս ծախսող չի եղել, այլ օգտագործել է բիզնեսում: Նա, օրինակ, գնել է Դալլասի «Մեյվերիքս» բասկետբոլի բիմի բաժնետոմսերի 2 տոկոսը: Վազքի ժամանակ իր ուղիղ կնգվածքի համար «Արման» մականունը ստացած Մայքլ Ջոնսոնը վերջերս մի նամակ էր ստացել մեծն Օուենսի տիկնոջից Ռուբից: Վերջինս իր նամակով հաջողություն էր Ջոնսոնին Ատլանտայում ունեցած հաջողությունների համար: Ջեսսի Օուենսը եւ Մարտին Լյութեր Կինգը մնում են Մայքլ Ջոնսոնի կարոը: «Երբ տարիքս առա, հասկացա Ջեսսի Օուենսի միտքը: Ինձ գերեց նրա այն մեծ կամքը, որի շնորհիվ կարողացավ ոչնչացել ապարտեյան եւ սասիզմի դեմ», ասում է Մայքլ Ջոնսոնը: Ջեսսի Օուենսի մասին: Մայքլ Ջոնսոնը ոսկե մեդալակիր դառնալով ոչնչանալան չդարձրացավ սեւ ձեռնոցներով, ինչպես որ 1968 թ. արեցին հաղթանակ տարած այն սեւամորթ մարզիկները, իրենց բողոք սեւամորթների նկատմամբ խտրականության: Օլիմպիական կրկնակի չեմպիոնը հիմա փորձում է ոսկեզույն մարգարիտներով: «Ջեսսի Օուենսից հետո ժամանակներ շատ են փոխվել: Ես ծնվել եմ Ամերիկայում եւ հպարտ եմ ամերիկացի լինելու համար», ասում է Մայքլ Ջոնսոնը: Նա կյանքում շատ բան չի բաշխվածներ ունի, բայց Ջոնսոնը հավատարիմ է իր փոքրաթիվ բարեկամներին, որոնցից շատերին օգնում է ֆինանսապես: Նա չի սիրում դիսկոտեկներ այցելել եւ գիշերային կյանքով տարվել: Մայքլ Ջոնսոնը չի ծխում, չի խմում: Նրա նախասիրությունը երաժշտությունն է: հաստատես ջազը: Ժամանակ առ ժամանակ նա օդանավով է առնում եւ մեկնում Լաս Վեգաս, որ դիտում է բոքսիմարտի հանդիպումներ, բայց երբեք չի խաղում կազինոներում: Ջոնսոնը նաեւ չի սիրում խոսել բարոյական բնույթի մասին: Մի խոսքով, Մայքլ Ջոնսոնը հիանալի փեսացու է, եթե որ այդ հատկանիշների հետ միասին ամուսնացած չէ:

Աէխարհի ռեկորդակիր Մայքլ Ջոնսոնը

ՇԱԽՄԱՏ

Գորոցականները մեծահասակների մրցաշարում

Չորս օր է ինչ սկսվել է շախմատի տղամարդկանց երեւանի առաջնության 1/8 եզրափակիչը: Մրցումներին մասնակցում են նաեւ դպրոցականներ, որոնք վերջերս լրացրել են առաջին կարգի նորման: Մասնավորապես երեքունու շրջանի մասնագիտացված մարզադպրոցում օրերս տեղի ունեցավ որոկավորման մրցաշար, որին մասնակցում էին 26 երեխաներ: Դրանցից 3-ին հաջողվեց լրացնել առաջին կարգի նորման, որը բավականին բարձր էր. 9 հնարավորից 7 միավոր: Առաջին տեղը գրավեց թիվ 179 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Ավետիք Խաչատրյանը, որը վաստակեց 7,5 միավոր: Ի դեպ Ավետիքը հանրահայտ ֆուտբոլիստ, «Փյունիկի» եւ Հայաստանի հավաքականի խաղացող Վարդան Խաչատրյանի եղբոր որդին է:

Երկրորդ-երրորդ տեղերը բաժանեցին 9-րդ դասարանցիներ Կարեն Քոչարյանն ու Եդվարդ Սարգսյանը:

ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ,
Վարդենատրյան բնակավայր

ԱՏԼԱՆՏԱ-96

Օլիմպիական մեդալների մեկ այլ դասակարգում

«Ֆլորիդայի թերթ Սենտինելը» վերջին համարում «Ո՞վ է թիվ մեկը» վերնագրի տակ հոդվածում առաջարկում է 26-րդ օլիմպիական խաղերի մեդալակիր երկրների մեկ այլ դասակարգում, որի դեպքում ըստ հերթականության առաջին 4 տեղեր գրաված երկրների՝ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Գերմանիայի եւ Չինաստանի հավաքականները զգալիորեն ետ են մնում 7-րդ տեղում հայտնված Ավստրալիայի հավաքականից՝ ազգաբնակչությունը բաժին ընկած մեդալների հանակով: Նոր դասակարգման սկզբունքը հաշվի մեդալների եւ տվյալ երկրի ազգաբնակչության հարաբերությունն է: Մրցումներին մասնակցում են նաեւ դպրոցականներ, որոնք վերջերս լրացրել են առաջին կարգի նորման: Մասնավորապես երեքունու շրջանի մասնագիտացված մարզադպրոցում օրերս տեղի ունեցավ որոկավորման մրցաշար, որին մասնակցում էին 26 երեխաներ: Դրանցից 3-ին հաջողվեց լրացնել առաջին կարգի նորման, որը բավականին բարձր էր. 9 հնարավորից 7 միավոր: Առաջին տեղը գրավեց թիվ 179 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Ավետիք Խաչատրյանը, որը վաստակեց 7,5 միավոր: Ի դեպ Ավետիքը հանրահայտ ֆուտբոլիստ, «Փյունիկի» եւ Հայաստանի հավաքականի խաղացող Վարդան Խաչատրյանի եղբոր որդին է:

Երկրորդ-երրորդ տեղերը բաժանեցին 9-րդ դասարանցիներ Կարեն Քոչարյանն ու Եդվարդ Սարգսյանը:

ՄԻՔԱՅԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ,
Վարդենատրյան բնակավայր

ԱՄՆ-ի ազգային ռազմի ընդարձակության հավաքականի տխուր օրերը

Անցած հունվարի 6-ին ազգային ռազմի ընդարձակության ամերիկյան չեմպիոն Դեյվ Շուլցի սպանությունից հետո այս մարզածեւը Միացյալ Նահանգներում մեծ տագնապ է առաջացրել: Օլիմպիական չեմպիոնի մահվան հետ կապված խնդիրները (միասեռություն) դժգոհություն են մարդկանց մեջ եւ հեռացնում ամերիկացիներին այս մարզածեւից, մի մարզածեւ, որը մեծ մասնակցություն ունի ամերիկյան հավաքականներում: Ժամանակակից բոլոր օլիմպիական խաղերի ընդարձակության մրցումներում նվաճած 105 մեդալներից ամերիկացիները 94-ը ձեռք են բերել հենց ազգային ռազմի ընդարձակությունում: Դեռ ավելին, Խորհրդային Միության փլուզումից հետո ԱՄՆ-ը դարձավ այս մարզածեւի առաջին երկիրը: Անցյալ տարի Ատլանտայում տեղի ունեցած աշխարհի առաջնությունում ամերիկացիները 10 մեդալներից նվաճեցին 6-ը, որոնցից 4-ը՝ ոսկե, 2-ը՝ բրոնզե: Բայց Ջոն Դյուպոն միլիարդատերը, որը տարեկան 400 հազար դոլար էր հատկացնում այս մարզածեւին, հրաժարվեց մեկ կրակոցով վերջ դրեց ամբողջ երկրի երազներին: Մի միլիարդատեր, որն իր միջոցներով հոկա մարզահամալիր էր կառուցել եւ անվճար տրամադրել ԱՄՆ-ի ազգային ռազմի ընդարձակության հավաքականին, որի կազմում մինչեւ վախճանվելը մարզվում էր նաեւ Դեյվ Շուլցը: Այսօր Դեյվ Շուլցի սաներից մեկը՝ Կուրտ Էնգլը, զարմանում է, որ Ամերիկայի ընդարձակության Ֆեդերացիան չի ուզում Շուլցի հիշատակը հավերժացնել՝ մի արձան կառուցելով, չի ուզում, հանի որ Շուլցի աջակցությամբ է Դյուպոնի անունը «Բայց ինչ էլ որ լինի հանցանքը, Դյուպոնը նույնպես նկատելի անձնավորություն էր Ամերիկայի ընդարձակության», ասում է Կուրտ Էնգլը: Այսօր մեծ դայքար է ծավալվել Դյուպոնի դաշտանների եւ հակառակորդների միջեւ: Ամերիկայի ընդարձակության Ֆեդերացիայի նախագահ Լարի Սկիպպեսանոն ասում է, որ Դյուպոնը առանձնահատուկ մեծ հովանավոր չի եղել: Բայց ընդարձակության ամերիկյան գերասեր Բրյուս Բաումգարտնեի կարծիքով, առանց Դյուպոնի ընդարձակության ազգային հավաքական չէր լինի: Բաումգարտնեը սովորական մարդ չէ: Նա 1984 եւ 1992 թթ. օլիմպիական խաղերի 130 կգ հաստիքների օլիմպիական չեմպիոն է, 1988 թ. փոխչեմպիոն եւ աշխարհի 9-անգամ չեմպիոն: Նա ԱՄՆ-ում ընտրվել է որպես չեմպիոնների չեմպիոն: Նրան ամեն մի ամերիկացի ճանաչում է: 35-անգամ չեմպիոնը կարող է մասնակցել նույնիսկ 2000 թ. Սիդնեյի օլիմպիական խաղերին:

Գ. Ա.

Բրյուս Բաումգարտներ

3000 հույն մոտոցիկլավարների դեմ 2500 մոտոցիկլավար «Գորշ գայլեր»

9 ՕԳՈՍՏՈՍ, «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ». Թուրքիայի, իրենց «Գորշ գայլեր» անվանող զինյալներն այսօր հայտարարեցին, որ իրենք հակազդելու են հունական Կիպրոսում ստեղծվա վերջին կայանալիք մոտոցիկլավարների մրցաշարին, հանի որ այն կարող է հասնել Հյուսիսային Կիպրոսի ինքնահռչակ, այսպես կոչված, Թուրքական հանրապետության սահմանը: Հունական Կիպրոսում հայտարարվել է, որ 7000 մոտոցիկլավար կիսավարի կոչում եւ սպասանցել են, որ կանցնեն ՄԱԿ-ի կողմից հսկվող բուֆերային այն տարածքը, որը բաժանում է կղզու հիմնական հատվածը՝ թուրքականից: Թուրքիայի «Գորշ գայլերը» անվտանգության բողոք ներկայացնելով ասել են, որ իրենք 2500 մոտոցիկլավար կնախապատրաստեն հունական կողմից ելույթներին դիմավորելու համար: Հունական Կիպրոսի մոտոցիկլավարների ընկերության նախագահ Ջորջ Հանջիպարասը, որը կազմակերպել է կիրակի օրը տեղի ունեցած մրցաշարն ասել է, որ վերջինս խաղաղ կընթանա եւ որ դրա նպատակը տված միջոցառումը սատրելը չէ: Այնուհանդերձ, Մեծ Բրիտանիայի լիազոր ներկայացուցիչն ասել է, թե սպասվում է, որ որոշ բռնարարքներ տեղի կունենան: Անգլիայի ներկայացուցիչները ու ԱՄՆ-ի դեսպանությունը իրենց հաղորդագրություններին կոչ են արել այդ օրը «բուֆերային» գոտուց հեռու մնալ:

Բարիզ փոխում է
ՄԻՐՈՆ ՄԵՐՈՒՇԱՆՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հեռֆերով

ՈՐՍԱՍՏԱՆ

Բորիս Եկցինի պաշտոնամուտն ու Գրոզնու գրավումը համընկան

Սկիզբը էջ 1

Դրանից հետո նախագահ Եկցինին հանձնվեց պետության բարձրագույն իշխանության երկրի նախագահի նշանը. Կրեմլում Եկցինի նստավայրի տանիքի վրա բարձրացվեց նախագահի դրոշը, ճիշտ սիմֆոնիկ նվագախմբը կատարեց Գլինկայի «Փառաբանիր, ռուս ժողովուրդ» ստեղծագործությունը: Նախագահին օրհնեց Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիյ Բ-ն: Վաղում, նախագահի օրենսդրական առթիվ Մոսկվայում 30 հրետանային համազարկ արձակվեց: Բորիս Եկցինի երդումը 45 վայրկյան տևեց, իսկ ողջ արարողությունը 16 րոպե: Մեկնաբանները նկատեցին, որ նախագահը շարժվում էր խոսում էր դանդաղ, այդ երկրներում ընդունված պաշտոնամուտի ավանդական և պարտադիր նասը չատասանվեց, իրեն ընտրած ժողովրդին և իր մրցակիցներին շնորհակալություն չհայտնվեց: Նախագահն այնման տխուր էր ու վատառող. որ. օրինակ, ֆրանսիական «Ֆիգարո» թերթը երեկվա գիշերային իր թողարկման խմբագրականն սկսում էր այսպես. «Այսօր տեղի ունեցավ Բորիս Եկցինի ոչ թե պաշտոնամուտը, այլ հուղարկավորությունը»:

Երբ Մոսկվայում հրետանային համազարկ էր արձակվում, Չեչնիայի մայրաքաղաք Գրոզնիում էլ էին համազարկեր հնչում: Բանն այն է, որ Բորիս Եկցինի պաշտոնամուտի արարողությունից կես ժամ առաջ չեչեն անջատողականները գրավեցին Կառավարության տունը: Դուդաևականներին հաջողվել է գրավել նաև ՆԳՆ-ի շենքը, մարտեր են ընթանում Անվտանգության դաշնային ծառայությունն շենքի համար: Ինտերֆաքս գործակալությունը հայտնեց, որ Գրոզնու կենտրոնական մասը շրջափակված է չեչեն գրոհայիններ կողմից և շուրջ 7 հազար ռուսաստանյան զինծառայողներ նույնիսկ չեն էլ փորձում ճեղքել շրջապատման օղակը, այլ միայն իրենց կյանքը փրկելու համար դասալիք դիմադրության են ցուցաբերում:

Գրոհայիններ դարանակալել և ոչնչացրել են ռուսական զրահամեքենաների ու տանկերի շարասյունը, որն ուղարկված էր Գրոզնիում շրջափակված զորքերին օգնելու համար: Լրացուցիչ ուժեր Գրոզնի մտցնելու մյուս փորձերն էլ հաջողություն չունեցան: Ռուսական զինվորական հրամանատարության ներկայացուցիչները մարտերի չորրորդ օրը խոստովանեցին, որ խենք չեն վերահսկում իրադրությունը Գրոզնիում: Մոսկվայամետ կառավարության ղեկավար Դոկու Զավգաևն առանց կառավարության իր անդամներին տեղյակ դնելու հինգշաբթի օրը թռավ Մոսկվա, սակայն օդանավը եղավ մի քանի ժամ հետո վերադառնալ Գրոզնի «հայրենիքում իրավիճակի կտրուկ սրման դեպքում»: Իսկ Չեչնիայի հարցով պետական հանձնաժողովի շրջապատման մեջ գտնվող Խանկալայի օդանավակայանից վերադարձավ Մոսկվա, որտեղ այդ հանձնաժողովի ղեկավար Սերգեյ Սլիպչենկոն հայտարարեց, որ չեչեն անջատողականների ղեկավարների հետ ոչ թե բանակցություններ է ղեկավարել, այլ հարցազրույց նրանց: Չեչնիայի երկրորդ քաղաք Գուդերմեսում անջատողականները դուրս են եկել երկիրկել ներքին գործերի քաղաքային բաժինը: Լրատվական գործակալությունների հաղորդագրությունների համաձայն չեչեն զինյալների հսկողության տակ է գտնվում նաև Չեչնիայի երրորդ քաղաք Արգունը: Իշկերիայի Հանրապետության մամուլի և տեղեկատվության նախարար Մոլլայի Ուդուգովը հայտնեց, որ հետագա արյունահեղությունը կանխելու համար իմն ուզում է կաղ հասատել Խանկալայում գտնվող շրջապատված ռուսական հեղակետի զինվորականների հետ: Որոշ աղբյուրներից հայտնի է դարձել, որ չեչեն զինյալները ցանկանում են գրոհել Հյուսիսային Օսիայում գտնվող Մոզդոկ քաղաքը, որը դաշնային ուժերի վերսաբեռնման կարևոր հենակետն է: Այդտեղից է Չեչնիա գալիս զինուժն ու ռազմական տեխնիկան: Իսկ Մոլլայի Ուդուգովն առաջարկել է Ռուսաստանին անհապաղ հաշտության բանակցություններ սկսել:

ՀԱՍԱՌՈՍ

Օգոստոսը հրդեհավտանգ ամիս է

ԵՐԵՎԱՆ, 9 ՕԳՈՍՏՈՍ, ԱՐՏԵՆԴՐԵՍ. Հայաստանում ամենաբարձր ջերմաստիճանը դիտվում է հուլիսին և օգոստոսին, ըստ որում, օգոստոսը, ըստ օդերևութաբանների կանխատեսումների, ինչպես Ամենոյեսի բոցակլիզ սառց օդերևութային հիդրոօդերևութաբանության կենտրոնի ղեկ Ալբերտ Ջորոյանը, 5-դ կարգի հրդեհավտանգ ժամանակաշրջանն է: Առաջիկայում սպասվում է ջերմաստիճանային բարձր ռեժիմ և օդի զգալի չորություն: Դա դպրանավորված է հարավային տաք հոսանքներով, ուստի հանրապետության տարածքում կրկնդանալի բարձր ջերմաստիճան: Այդ կապակցությամբ օդերևութաբաններն առաջարկել են «Հայանտառ» անտառային ծառայությանը: Վերջինս միջոցներ է ձեռնարկել ամենահրդեհավտանգ հատվածներում բնակչության մուտքն արգելելու համար: Անտառապահության ծառայություններն ուժեղացրել են հսկողությունը Երևանի, Աղարանի, Գառնիի, Բյուրականի, Վայոց ձորի և Սևանի ավազանի անտառային տարածքներում:

Կարկուտ և հորդ անձրև Նոյեմբերյանում

ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆ, 9 ՕԳՈՍՏՈՍ, ՓԱՍ. Եղանակը իր մեսիջներն է դրսևորում՝ օգոստոսին կարկուտ և ուժեղ անձրև տեղալով: Օգոստոսի յուրաքանչյուր 8-ի գիշերը ուժգին քամու ուղեկցությամբ սառույցի կարկուտը կես ժամ տևողությամբ մեծաչափ վնասել է Վաղանիս գյուղի 10 հա խաղողի այգին, որը լավ բերք էր խոստանում: Տուժել են նաև դեռևս չհնձված 15 հա ցորենի արտերը: Նույն օրը հորդ անձրևից և խառնուց Ջորակերտում փլվել է մեկ տուն:

ՏՐՅԱԼ

Հայ և թուրք գործարարները ցանկանում են Հայաստան-Թուրքիա սահմանը բացված տեսնել

ԵՐԵՎԱՆ, 9 ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ. «Ես, որպես գործարար, հավատացած եմ, որ Հայաստանի և Թուրքիայի միջև ճանապարհները անոթայման կբացվեն», օգոստոսի 9-ին Կարսի նահանգի արդյունաբերական և առևտրի պալատի պատվիրակության ու հայ գործարարների հանդիպման ժամանակ հայտարարեց «Հորիզոնամաս» գործարանի տնօրեն, ԱԺ պատգամավոր Թելման Տեր-Պետրոսյանը: Նրա խոսքերով, նման ցանկություն ունեն նաև Թուրքիայի, մասնավորապես Կարսի և Իգդիրի նահանգների գործարարները: Թ. Տեր-Պետրոսյանի կարծիքով, սահմանի բացումը կարող է տեղի ունենալ ավելի վաղ, քան Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը:

Ըստ Թ. Տեր-Պետրոսյանի, ներկայումս մշակվում են Հայաստանի և Թուրքիայի տնտեսական համագործակցության ծրագրեր մասնավորապես էներգետիկայի, գազի, տարանցիկ փոխադրումների, ցեմենտի և մետաղի ջարդոնի վաճառքի և այլ ոլորտներում: Այդ ծրագրերի իրականացման դեպքում, Թ. Տեր-Պետրոսյանի գնահատականով, Հայաստանի և Թուրքիայի միջև առևտրաշրջանառությունը առաջիկա 3-4 տարիների ընթացքում կարող է հասնել 600-700 մլն դոլարի (հաշվված տարանցիկ փոխադրումների հնարավորություններ): Իսկ Թուրքիա-Ռուսաստան, Թուրքիա-Ադրբեջան, Թուրքիա-Միջին Ասիա տարանցիկ փոխադրումների շահավետության մասին կարելի է դատել հետևյալ կազմել Ռուսաստան-Թուրքիա առևտրաշրջանառության անընդհատ աճող ծավալներից: Երեք 7 տարի առաջ այն կազմում էր մոտ 400 մլն դոլար, որպես ներկայումս հասել է 5-6 մլրդ դոլարի: Նման մեծ ծավալների հասնող առևտրաշրջանառության համար, Թ. Տեր-Պետրոսյանի կարծիքով, Հայաստանը հարմար տարանցիկ ճանապարհ է:

Թուրքական դեսպանության ղեկավար, Կարսի առևտրաարդյունաբերական և առևտրի դպրոցի նախագահ Մեհմետ Յոլմազի խոսքերով, «գլխավոր նոպատակը Գյումրիի և Կարսի միջև եղած սահմանապատն բացումն է», որի վրա լինելու դասճառով երկրորդ դրան է մղված համագործակցությունը արդյունաբերության ոլորտում: Նա նշեց, որ այդ են ցանկանում թե Թուրքիայի ղեկավարները, և թե ժողովուրդը: Ըստ Մ. Յոլմազի, Կարս-Հայաստան համագործակցությունը կարող է զարգանալ սենդի և տեխնիկ արդյունաբերության բնագավառներում:

Կարսի գործարարների այցը Հայաստան դասասխանն է վերջերս հայ գործարարների Թուրքիա կատարած այցի: Մինչ այդ, հունիս ամսին, տեղի է ունեցել Կարսի նահանգապետի և Գյումրիի մարզպետի հանդիպումը: Այցի ընթացքում Կարսի գործարարները հետաքրքրություն կրեցնեն ծանոթանալ Հայաստանի տնտեսությանը, ինչպես նաև հանդիպումներ ունենալ հայ գործարար շրջանակների ներկայացուցիչների հետ: Օգոստոսի 8-ին նրանք հանդիպում են ունեցել Գյումրիի գործարարների հետ: Օգոստոսի 10-ին նրանք կրկին կընկնեն Գյումրի:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Մենք երկու սերունդների կապող օղակն ենք»

Հարազատ մնալով մշտապես հրապարակում երևալու իրենց որդեգրած քաղաքականությանը, «Արդարություն» ուսանողական արհմիությունը եւ արհմիության նախագահի որակումով իրենց «քաղաքական սենսու» «երիտասարդական ակադեմիա» կազմակերպությունը հրավիրել էին հերթական ասուլիսը: Լրագրողների ուշադրությանը ներկայացված մտահոգող հարցերից մեկը երիտասարդության ազգային համադաշնությունների խորհրդի հարյուրօրյա գրեթե անարդյունավետ գոյությանն էր վերաբերում (տարօրինակ է, ինչու խորհուրդը հանդես չի գալիս «հոբելյանի» առթիվ): Ասուլիս վարողները չհրաժարվելով «սերնդի քաղաքական փոխհամաձայնություն» ժամանակին համադաշնությանը տված իրենց գնահատականից, նշելով, որ համախմբված կազմակերպությունները ջիման եւ փորձի փոխանակման դաշտ ունեցան, մասնավորապես արտաքին քաղաքականության խնդրում դրական համարելով Քոքուլթիում «երիտասարդությունը հանուն Անդրկովկասի խաղաղության» հանդիպման ժամանակ Հայաստանի դասվիրակության դասաշտ ու արժանադատիվ ներկայանալը, այդուհանդերձ ցավ հայտնեցին լուրջ բացթողումների համար: Խորհուրդը չկարողացավ ստեղծել այնպիսի մեխանիզմներ, հասնել կազմակերպվածության այնպիսի լրջության, որ իշխանությունները հաշվի նստեն նրանց հետ: Դա հիմնականում կապված է առանձին կազմակերպությունների՝ իրենց խնդիրը հստակ չդասկերացնելու, կայացած չլինելու հետ, ուստի չէր կարող գոյություն ունենալ ընդհանուր գաղափարական դաշտ, սոցիալական բազա: Արհմիության նախագահը ժխտեց վերեւներից արհեստական միավորում ստեղծելու վարկածը, միաժամանակ չհամաձայնեց կենտրոնացումը ԼԿԵՄ-ի հետ համեմատելուն: Համադաշնությունը կոչված էր ներկայացնելու երիտասարդության բոլոր լուրջ ուժերի սոցկերը, որը չհաջողվեց: Սի քանի ազդեցիկ կազմակերպություններ, այդ թվում եւ «Երիտասարդ հայերը», երբեւէ համագործակցելու փորձ չեն արել: Բայց մեղքը ոչեմ է փնտրել սեփական անձի մեջ: Համադաշնության նիստերի մեծ մասը նվիրված են եղել ոչ թե ծրագրերի ստեղծմանը, այլ զուտ կազմակերպչական խնդիրների: Ավելի դինամիկ գործելու համար առաջարկվեց, որ դեկավար կազմում միմյանց հերթագայեն կազմակերպությունների տարբեր անդամներ: Չեմ կարծում, սակայն, որ դա կավելացնի գաղափարներ ու գործելու ցանկություն ունեցողների՝ մասների վրա հաշվվող թիվը: Իսկ մյուսները, ինչպես ասուլիսի ընթացքում էր, բախման կխաղան (եւ ոչ միայն այս կազմակերպությունում): Կարծում եմ նաեւ, որ միաբանությունը չի կարող կայանալ, քանի որ յուրաքանչյուր կազմակերպություն, թերեւս ելնելով հավակնոտությունից, իր ներսում ծնվող մտքերն ու ծրագրերը չի ներկայացնում ընդհանուր կատարման: Գերադասում է ինքնուրույն գործել: «Արդարությունն» ինքը այդպես է վարվել, մեկ տարբ առաջ ԼԴՀ գործուղելով ազգային ազատագրական դայքարի մասին հավաքորդ-տարեգիրների: Պայմանավորվածություն է ձեռք բերվել Հայաստանի դեսական ռադիոյի հետ՝ անցկացնել գոհված ազատամարտիկներին նվիրված մարաթոն, իսկ հանգանակված գումարը կօգտագործվի ազատամարտի մասին նյութերի եւ բրոշյուրների լույս ընծայման համար: Ի դեպ, այս ծրագրի մասին խոսվել էր համադաշնության ասուլիսներից մեկի ժամանակ: Բայց ընդհանուրի գործ չդարձավ: «Արդարությունը» ԼԴՀ համադաշնության մարմիններին կներկայացնի նաեւ Արցախում երիտասարդական կազմակերպություններ ստեղծելու իր նկատառումները:

Ասուլիսին արձարձվեց կազմակերպության ու արհմիության շուրջ չդադարող ասեկոսեների հարցը: Չնայած «սրանից հետո էլ բամբասանքներ հաշվի չենք առնելու» հայտարարությանը, ակնհայտ էր, որ մերթ ընդդիմությանը, մերթ իշխանություններին տրված լինելու մեղադրանքները տհաճություն են դասճառում: Բայց երկու տիրոջ ծառա համարվողը այս դեպքում կարծես բերանված է մնում: Ինչ վերաբերում է ուսանողների կողմից վստահությանը դասասխան ստացանք, որ ուսանողական ոչ մի կազմակերպություն այսօր կայուն էլեկտորաս չունի: Պատճառը՝ միայն հանրաքվեությունում ստեղծված բարոյահոգեբանական մթնոլորտն է եւ այն, որ ուսանողությունն ավանգարդից վերածվել է հասարակության եղբայի ընդամենը մի օղակի, այլեւ երիտասարդական կազմակերպությունների՝ իրենց ուժերից վեր խնդիրներ առաջադրելը, կամ էլ դրանք կատարելու համար բավականաչափ վճռական չլինելը:

Այնուամենայնիվ, «Երակի» նախագահ Ա. Վարդանյանը հայտարարեց կազմակերպության ներուժի եւ նոր սերնդի համար մշակած գաղափարախոսության մասին: «Երակը» կարծես դարձել է սերնդային գաղափարախոսության կենտրոն, որը նոր շարժում է փորձում ծեւավորել: Նախորդ սերնդի սխալն այն է, որ քաղաքական գաղափարները ուզում է տարածել քաղաքական կլիտայի միջոցով: Տարածմ ոչեմ է ստեղծվի, ընդհանուր մակարդակ, որի վրա կ առաջանան բյուրեղացումները: Դա է քաղաքացիական հասարակությունը»: Իրենց գլխավոր համագործակիցը նրան համարում են «բանիմաց մարդկանցով համալրված» երիտասարդության ղեսական վարչությունը: Կազմակերպությունը գաղափարախոսության տարածման առաջին փուլը հնարավոր է համարում մշակույթի միջոցով: Ծրագրվում է միջոցառումների շարք, այդ թվում եւ հանդիպումներ նախագահության թեկնածուների, նրանց շտաբի դասասխանատուների հետ: «Երիտասարդության դասհանջը յուրաքանչյուր թեկնածուից այն հասարակության կայացումն է, որը երաշխիքներ կընծեռի մեր սերնդին ինքնահաստատվելու, ինչպես նաեւ՝ հայաստանում քաղաքացիական հասարակության կառուցման»: ՄԱՐԻ ՀԱՍԵՍՅԱՆ.

ԱՅԱՔՍ
ՍՊ ԸԿԵՐՈՒԹՅՈՒՆ

հրավիրում է Ձեզ օգոստոսի 13-17-ը կատարել հեռաֆրֆիր ճանապարհորդություն

Ուղիղ չվերթ TU-154M ինքնաթիռով

ԵՐԵՎԱՆ-ՎԱՐՇԱՎԱ-ԵՐԵՎԱՆ

Այցելության քաղաքներ՝ Վարշավա կամ Լոմ
ըստ ցանկության
Պտույտ քաղաքի շուրջը, հրաշեշտի երկիր

Դուք կբնակվեք 2 եւ 3 աստղանոց համարներում բոլոր հարմարություններով, անվճար կարող եք փոխադրել 20 կգ ուղեբեռ, 20 կգ-ից ավելի ուղեբեռի ամեն 1 կգ-ի փոխադրման համար վճարը 1.5 $-ի համարժեքով

«ԱՅԱՔՍ» ՍՊԸ ցանկանում է Ձեզ հաճելի ճանապարհորդություն

ԵՐԵՎԱՆ, ՊՈՒՇԿԻՆԻ 43 Ա, ՀԵՌ. 53-15-73, 53-88-45

Անվճար տեղեկություններ Հայաստանում գործող ծեռնարկությունների *առաջարկի* եւ *պահանջարկի* մասին հեռախոսով: Զանգահարել 589167, 581351 «Սփյուռ»:

«Հայաստանի» հրատարակչության տպարան. Երևան-23, Արամի փող. 2. Գրանցման թիվ 65. Պատվեր 69149. Տիրաժ 2159. Տարեգանգը՝ 4000. Ստորագրված է տպագրության՝ 9.08.1996. Գինը 75 դրամ